ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ԵԴ2/7583/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

01.08.2025թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Բունիաթյանի, քննարկելով թիվ ԵԴ2/7583/02/25 քաղաքացիական գործով ըստ հայցի «Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Սեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Տ

<u>1. Գործի դատավարական նախապատմությունը.</u>

«Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Սեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի կողմից 21.07.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին:

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2025.08.01 14:13:06 AMT

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատավոր Ռ.Բունիաթյանին է մակագրվել և հասանելի դարձել 22.07.2025 թվականին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.07.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պահանջվել են գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ որոշվել է գործը քննել դատական նիստում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի կողմից 29.07.2025 թվականին դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.07.2025 թվականի որոշմամբ պահանջված ապացույցները:

29.07.2025 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն:

<u>2. Դիմողի ներկայացուցչի փաստարկները, իրավական դիրքորոշումը և պահանջը.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից 29.07.2025 թվականին դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն, որով հայտնել է, որ սույն գործով անհրաժեշտություն է առաջացել գնման գործընթացի կասեցումը վերացնել և այն շարունակել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածը՝ նշել է, որ տվյալ դեպքում, ՀՀ Մարտունու համայնքի թվով 17 բնակավայրերում (թվով շուրջ 59 տարբեր փողոցներ) և Մարտունի քաղաքում ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/12 ծածկագրով ընթացակարգով նախատեսվում է իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ՝ մասնավորապես ճանապարհների հիմնանորոգում և կահավորում, հողային պաստառի վերականգնում, ջրահեռացման համակարգի վերականգնում: Հաշվի առնելով վերագրյալ աշխատանքների կատարման կենսական նշանակությունը Մարտունի համայնքի բնակիչների համար և տվյալ աշխատանքների կատարման անհետաձգելի անհրաժեշտությունը, Մարտունու համայնքապետարանը սույն գնումը իրականացրել է հրատապ բաց մրցույթի ընթացակարգով՝ աշխատանքների արդյունքը հնարավորինս շուտ ստանալու համար:

Մասնավորապես, նշել է, որ սույն գնումն իրականացվել է «Հրատապ բաց մրցույթ» ընթացակարգով, քանի որ Մարտունի համայնքը գտնվում է բարձր լեռնային գոտում և կատարվող աշխատանքները սեզոնային բնույթի են, ուստի պետք է կատարվեն մինչև թույլատրելի ջերմաստիճանի սահմաններում՝ կախված եղանակային պայմաններից: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից եղանակային պայմանները Մարտունի համայնքում դառնում են անբարենպաստ՝ ասֆալտապատման աշխատանքների կատարման առումով: Բացի այդ, համայնքապետարանի կողմից ընտրվել են հիմնանորոգման ենթակա այնպիսի անբարեկարգ և գրեթե անանցանելի փողոցներ, որոնց հիմնանորոգումը ներկա պահին առավել անհրաժեշտ է և բխում է հանրության շահերից, ինչպես նաև ունեն կենսական նշանակություն և հարկավոր է դրանք իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ այդ աշխատանքների իրականացման ձգձգումը հանգեցնում է ոչ միայն համայնքի բնակիչների կյանքի որակի անկմանը, այլ նաև բացասաբար է ազդում համայնքի տնտեսական զարգացման վրա, քանզի խոչընդոտում է ապրանքների և բեռների արագ տեղափոխմանը դեպի համայնք, համայնքից դուրս և համայնքի ներսում:

Նշել է, որ հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ դատարանի եզրափակիչ դատական ակտը հնարավոր է, որ կայացվի ամառային ամիսների ավարտից հետո, ինչի պարագայում ասֆալտապատման աշխատանքների իրականացումը սկսվելու է աշնանը՝ անձրևային սեզոնի ժամանակ, ինչի հետևանքով հնարավոր է, որ ստեղծվի մի իրավիճակ, երբ աշխատանքները հնարավոր չլինի կատարել նվազագույն ընդունելի ժամկետում և համայնքի փողոցները ամիսներ շարունակ կիսաքանդ վիճակում մնան՝ այդպիսով էլ ավելի վատթարացնելով իրավիճակը և խիստ անհարմարություն պատճառելով համայնքի բնակիչներին:

Բացի դրանից, նշել է, որ վերոնշյալ աշխատանքների կատարումն իրականացվում է «Համայնքների սոցիալ տնտեսական զարգացմանն ուղղված» սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ պետական բյուջեի համաֆինանսավորման սկզբունքով (Համայնքի մասնաբաժին՝ 50%,Պետության մասնաբաժին՝ 50%), և աշխատանքների ձգձգումը կարող է հանգեցնել համաֆինանսավորման պրոցեսի կասեցմանը կամ առնվազն բարդացնել այդ պրոցեսը՝ կապված բյուջետային տարվա ավարտի և դրանով պայմանավորված բյուջետային հաշվարկների իրականացման հետ: Ընդ որում, պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ծրագիրն արժանացել է դրական հավանության պայմանով, որ 2025 թվականին կիրականացվեն շուրջ 1,38 մլրդ դրամ ընդհանուր արժեքով փողոցների հիմնանորոգման աշխատանքներ (առաջնահերթություն տալով դեպի դպրոցներ և նախադպրոցական հաստատություններ գնացող ճանապարհներին)՝ ներկայացնելով ցանկը, իսկ մնացածը կիրականացվեն 2026 թվականին:

Նշել է, որ համահայցվորներից «Շանթ-Մեյրան» ՍՊԸ-ն արդեն իսկ ծանրաբեռնված է պետական գնումների մի քանի պայմանագրերով: Մասնավորապես. ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար «ՏԿԵՆ-

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2025.08.01 14:13:27 AMT

ՀԲՄԱԾՁԲ-2025/47Ծ» ծածկագրով, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ (շուրջ 677,777,700 ՀՀ դրամ), ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան, Գ. Չիրոյան և Սայաթ Նովա փողոցների խաչմերուկից մինչև Ն. Գետաշեն բնակավայրի թիվ 2 միջնակարգ դպրոցի խաչմերուկ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ (շուրջ 737,700,000 ՀՀ դրամ), ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանեվան, Ծովակ և Լուսակունք բնակավայրերի տարբեր փողոցների ասֆալտապատման աշխատանքներ (շուրջ 423,900,000 ՀՀ դրամ): Հավելել է, որ 2024 թվականի մայիսի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար հրատապ բաց մրցույթի ձևով հայտարարվել էր «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն, Գեղհովիտ, Մադինա, Վ. Գետաշեն, Ն. Գետաշեն, Լիճք, Ծակքար, Ծովասար, Զորագյուղ, Երանոս բնակավայրերի և Մարտունի քաղաքի փողոցների ասֆալտապատման» աշխատանքների ձեռքբերման մրցույթ և տվյալ գնման ընթացակարգի հաղթող մասնակից էր ճանաչվել «Ծանթ-Սեյրան» ՍՊԸ, սակայն մինչև օրս կատարել է վերոնշյալ աշխատանքների մոտավորապես 50 տոկոսը:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը դատարանին խնդրել է ՀՀ Մարտունու համայնքապետարանի կողմից հայտարարված թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱԾՁԲ-24/12 » ծածկագրով գնման ընթացակարգի կասեցումը վերացնել:

3. <u>Դատարանի պատճառաբանությունները, վերլուծությունները և եզրահանգումները.</u>

Դատարանն, ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը և պատասխանողի ներկայացուցչի՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Տվյալ դեպքում, «Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ծանթ-Սեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Հեղինե Մանուկյանի կողմից 21.07.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.07.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքից պահանջվել են գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ որոշվել է գործը քննել դատական նիստում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.07.2025 թվականի որոշումը համակարգային ծանուցման եղանակով, ինչպես նաև պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով 23.07.2025 թվականին ուղարկվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավարի կողմից 29.07.2025 թվականին դատարան է ներկայացվել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդություն:

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2025.08.01 14:13:38 AMT

Սույն գործի փաստերի համաձայն՝ պատվիրատու Մարտունու համայնքապետարանի կողմից հայտարարել է հրատապ բաց մրցույթ, որն իրականացվել է մեկ փուլով՝ Էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Առկա է նշում, որ ծրագիրն իրականացվելու է պետության կողմից համաֆինանսավորմամբ (Սուբվենցիոն ծրագրով) Համայնքի մասնաբաժին՝ 50%,Պետության մասնաբաժին՝ 50%:

Հրավերի 1.1. կետի համաձայն՝ գնման առարկան հանդիսանում է «Մարտունու համայնքապետարան»-ի կարիքների համար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն, Գեղհովիտ, Մադինա, Լեռնակերտ, Վ.Գետաշեն, Ն.Գետաշեն, Լիճք, Ծակքար, Ծովասար, Զորագյուղ, Վարդաձոր, Երանոս բնակավայրերի և Մարտունի քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը:

Դատարանը փաստում է, որ միջնորդությամբ հանդես եկած կողմը հիմնավորել է, որ գնման առարկան՝ ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը բնակչության համար ունի հանրային կարևոր նշանակություն՝ կապված մարդկանց և ապրանքների (բեռների) ապահով երթևեկության և տեղաշարժի հետ: Ընդ որում՝ կարևոր հանրային նշանակություն ունի հատկապես որակյալ ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը, որպիսի հանգամանքի վրա ուղղակի ազդեցություն ունի նաև այդ աշխատանքների կատարման եղանակային պայմանները:

Նկատի ունենալով, որ մրցույթը հայտարարված է եղել «Հրատապ բաց մրցույթ» ընթացակարգով, հաշվի առնելով պատասխանող կողմի փաստարկներն առ այն, որ Մարտունի համայնքը գտնվում է բարձր լեռնային գոտում և կատարվող աշխատանքները սեզոնային բնույթի են, աշխատանքների կատարումն էականորեն կախված է այդ աշխատանքների կատարման եղանակային պայմաններից, ինչպես նաև նշված ճանապարհները բնակչության համար ունեն հանրային կարևոր նշանակություն՝ կապված մարդկանց և ապրանքների (բեռների) ապահով երթևեկության և տեղաշարժի հետ, և հաշվի առնելով, որ միջնորդությունը ներկայացնելու օրվանից հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ առարկություն կամ դիրքորոշում՝ դատարանը գտնում է, որ դրանց ժամանակին չկատարման արդյունքում առկա է հանրային շահ, ուստի պետք է վերացնել թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/12» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ, 134-րդ, 135-րդ 199-րդ, 200-րդ, 361-րդ, 362-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/7583/02/25 քաղաքացիական գործով ըստ հայցի «Արտաշատի ԷՑԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Սեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին, պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից ներկայացված գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը բավարարել:
2. Վերացնել թիվ «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/12» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
3. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2025.08.01

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ անվճար էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am